ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЙ

АРМАВИРСКИЙ МАРЗ

МУНИЦИПАЛИТЕТ

С. АРЕВАШАТИ

հեռ.098-44-33-08 тел.098-44-33-08

թիվ ___89__

«__04___» հունիս 2014թ.

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ պարոն՝
Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի գյուղական համայնքի ղեկավարի 2014 թվականի մայիս ամսվա ընդունած որոշումներն ու արձակած կարգադրությունները:

Առդիր՝ 9 թերթ:

Արևաշատի համայնքի ղեկավար /Ս.Գևորգյան/

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 12.53/6561-14
06 06 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
Մարզի Արևաշատի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի թիվ 16.
Հեռախոս /098/44-33-08
Էլ փոստ rmargarjan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

23 մայիսի 2014 թվականի թիվ 14-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԻ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ կետով. <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 23 մայիսի 2014թվականի թիվ 11-Ն որոշումը՝ որոշում եմ.

1.Մրցութային կարգով վարձակալության տրամադրել Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի սեփականություն հանդիսացող մերձարաքային գոտու գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի 23.48հա և 5-րդ կարգի 8.24հա հողատարածքները: Մեկնարկային վարձավճարի չափ սահմանել 3-րդ կարգի վարելահողի 1հա-ի համար 22000ՀՀ դրամ, 5-րդ կարգի 1հա-ի վարելահողի համար՝ 10000ՀՀդրամ:

2.Կանխավճարը և քայլի չափը հողի կադաստրային արժեքի 5%-ին համարժեք դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2014 թվականի մայիսի 23
գ. Արևաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
Մարզի Արևաշատի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի թիվ 16.
Հեռախոս /098/44-33-08
Էլ փոստ rmargarjan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

19 մայիսի 2014 թվականի թիվ 13-Ա

## 2014ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով բյուջետային համակարգի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով. Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի գյուղական համայնքի բյուջեի 01.1.1ենթախմբի նախահաշվում, էներգետիկ ծառայության 4212 հոդվածի հետ կապված կատարել եռամսյակային փոփոխություն՝ 2-րդ եռամսյակի 1000.0հազար դրամը դարձնել 1200.0հազար դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2014 թվականի մայիսի 19-ի
գ. Արևաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
Մարզի Արևաշատի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի թիվ 16.
Հեռախոս /098/44-33-08
Էլ փոստ rmargarjan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

06 մայիսի 2014 թվականի թիվ 12-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի երկրորդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի գյուղական համայնքի ավագանու 2014թվականի ապրիլի 28-ի թիվ 7-Ա որոշումը․

որոշում եմ՝

1. Դրամական օգնություն հատկացնել Հայրենական Մեծ պատերազմի մասնակից Տոյա Ավետիսյանին, համայնքի զոհված զինծառայողներ՝ Սերգո Հարությունյանի և Գևորգ Սահակյանի ընտանիքներին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2014 թվականի մայիս 06
գ. Արևաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
Մարզի Արևաշատի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի թիվ 16.
Հեռախոս /098/44-33-08
Էլ փոստ rmargarjan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

06 մայիսի 2014 թվականի թիվ 11-Ա

## ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի առաջին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեն ու համայնքի ավագանու թիվ 7-Ա որոշումը

որոշում եմ՝

1. 2014թվականի մայիսի 9-ին Արևաշատ համայնքում կազմակերպել և անցկացնել միջոցառում մեծ հաղթանակի 69-րդ տարելիցին նվիրված: Համայնքի բյուջեի այլ մշակույթային ծրագրերից 200.0հազար դրամ հատկացնել միջոցառումը կազմակերպված ձևով անցկացնելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետին՝ Հ. Ղազարյանին, սահմանված կարգով իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2014 թվականի մայիսի 06
գ. Արևաշատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«16» ՄԱՅԻՍԻ 2014Թ. ԹԻՎ 4-Ա

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 15.05.2014թվականի թիվ 01/05/1601-14 հանձնարարականը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի

2. Հանձնաժողովին՝
ա) Արևաշատ համայնքի վարչական տարածքում ճշգրիտ իրականացնել ցանքատարածությունների հաշվառումը՝ ըստ մշակաբույսերի և ամփոփ հաշվետվությունը մինչև ս/թ-ի հունիսի 1-ը ներկայացնել ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալությանը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ/

2014թվականի մայիսի «16»
գ. Արևաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի
ԹԻՎ 4-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Մելիքսեթյան / աշխատակազմի 1-ին կարգի մասն./

անդամներ՝ Հ.Անտոնյան /գյուղապետարանի գործավար/

Ք.Մխիթարյան/ աշխատակազմի 2-րդ կարգի մասն./

Գ.Մխիթարյան /համայնքի ջրբաշխ/

Ա.Բաբլոյան / համայնքի ավագանու անդամ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
Մարզի Արևաշատի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի թիվ 16.
Հեռախոս /098/44-33-08
Էլ փոստ rmargarjan@mail.ru

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

26 մայիսի 2014 թվականի թիվ 5-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12 ապրիլի 2001 թվականի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 49-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014թվականի մայիսի 23-ի թիվ 11-Ն որոշումը.
**կարգադրում եմ.**

1. Ստեղծել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությամբ տրամադրման մրցույթային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին՝ /Ս.Գևորգյան/ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով և այլ նորմատիվ ակտերով սահմանված կարգով իրականացնել համայնքի ավագանու 2014թվականի մայիսի 23-ի թիվ 11-Ն որոշման իրականացման համար անհրաժեշտ գործառույթները:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2014 թվականի մայիսի 26
գ. Արևաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի
ԹԻՎ 5-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝ Սուսաննա Գևորգյան- համայնքի ղեկավար:
Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Հ Բաբլոյան /համայնքի ղեկավարի տեղակալ/
Հանձնաժողովի անդամ՝ Վ.Մելիքսեթյան /աշխատակազմի առաջին կարգի մասն/
-,,- Ք. Մխիթարյան /աշխատակազմի երկրորդ կարգի մասն./
-,,- Ա. Հակոբյան /համայնքի ավագանու անդամ/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 29 » ՄԱՅԻՍԻ 2014Թ. Թիվ ծ.ա

## ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐ ԿԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ,159-րդ և 164-րդ հոդվածներով.Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու N 1384-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշմամբ և հիմք ընդունելով Կարինե Ստեփանյանի դիմումը

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի գյուղական համայնքի գրադարանավար Կարինե Ստեփանյանին 2014թվականի հունիսի 2-ից մինչև 2014թվականի հուլիսի 4-ը ներառյալ տրամադրել 2013թվականի ամենամյա արձակուրդը՝ 25 աշխատանքային (20 աշխատանքային, 5 լրացուցիչ) օր տևողությամբ:

2.Կարինե Ստեփանյանին աշխատանքի մեջ համարել 2014թվականի հուլիսի 7-ից

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2014թվականի մայիսի «29»-ի

գ. Արևաշատ